ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Անուն, ազգանունը.**

   Ֆելիքս Ցոլակյան,

   Արկադի Բալյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

   Արտակարգ իրավիճակների նախարարի պաշտոնակատար,

   Արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   ք. Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն), 2018 թվականի դեկտեմբերի 17-ից 19-ը:

4. **Հրավիրող կողմը.**

   Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական պաշտպանության, արտակարգ իրավիճակների և տարերային աղետների հետևանքների վերացման հարցերով նախարար Եվգենի Զինիչև:

5. **Գործուղման նպատակը.**

   Մասնակցություն Ռուսաստանի Դաշնության Փրկարարի օրվան նվիրված տոնական միջոցառումներին:

6. **Քննարկված թեմաները.**

   Գործընկեր երկրների արտակարգ իրավիճակների ոլորտի լիազոր մարմինների ղեկավարների հետ անմիջական շփումների ընթացքում քննարկվեցին արտակարգ իրավիճակների բնագավառում իրականացվող միջազգային և տարածաշրջանային կառուցողական համագործակցության ուղիները, ինչպես նաև քաղաքացիական պաշտպանության և տարերային աղետների հետևանքների վերացմանն առնչվող բազմաթիվ այլ հարցեր:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

   Ռուսաստանի Դաշնություն կատարած այցի շրջանակներում 2018 թվականի դեկտեմբերի 17-ին ԱԻ Նախարարի պաշտոնակատար Ֆելիքս Ցոլակյանը հանդիպում է ունեցել Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական պաշտպանության, արտակարգ իրավիճակների և տարերային աղետների հետևանքների վերացման հարցերով նախարար Եվգենի Զինիչևի հետ: Հանդիպմանը ընթացքում քննարկվել են հայ-ռուսական

հումանիտար արձագանքման կենտրոնի գործունեության ապահովման ուղղությամբ համատեղ իրականացված քայլերը՝ արտակարգ իրավիճակներից տուժած բնակչությանն անհետաձգելի մարդասիրական օգնության ցուցաբերման, արտակարգ իրավիճակների կանխման և վերացման բնագավառում մասնագետների ուսուցանման և որակավորման բարձրացմանն ուղղված աշխատանքներում, ինչպես նաև երկուստեք պայմանավորվածություն ձեռք բերվեց անհրաժեշտ քայլեր ձեռնարկել կենտրոնի տեխնիկական վերազինման ծավալների ընդլայնման (մասնավորապես քննարկվել է ուղղաթիռի ձեռք բերման ճանապարհները) և մասնագետների վերապատրաստման, որակավորման բարձրացման նպատակով ուսումնական կենտրոնի ստեղծման գործընթացների հնարավորությունների ուղղությամբ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Չկան:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Կողմերը երկուստեք կարևորել են գործընկերային համագործակցության զարգացումը և պատրաստակամություն հայտնել առավել ամրապնդել և ընդլայնել առկա փոխգործակցության շրջանակները, մշակել նոր ռազմավարական ուղիներ՝ կառուցված արտակարգ իրավիճակների բնագավառում փոխշահավետ հարաբերությունների հիման վրա:

10. Ստորագրությունը, ամսաթիվը.

21.12.2018թ.

Ֆելիքս Ցոլակյան _____

Արկադի Բալյան _____